ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԻՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԼՅՈՎԱՅԻ

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԶՈՀԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАЗИНЯН СЕРГЕЙ ЛЕВАЕВИЧ

БОРЬБА С ТОРГОВЛЕЙ ЛЮДЬМИ И ЗАЩИТА ПРАВ ЖЕРТВ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – Публичное право: конституционное; административное; финансовое; муниципальное; экологическое; европейское право; государственное управление.

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գագիկ Գարուշի Հարությունյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Արմեն Շուրայի Հարությունյան** իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Արտակ Միքայելի Ասատրյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 7-ին ժ. 14^{30}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель:	доктор юрид. наук, профессор **Гагик Гарушевич Арутюнян**
Официальные оппоненты:	доктор юрид. наук, профессор **Армен Шураевич Арутюнян** кандидат юрид. наук, доцент **Артак Микаелович Асатрян**
Ведущая организация:	**Институт философии, социологии и права РА**

Защита состоится 7 июля 2026 года в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 29 мая 2026 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակներում մարդկանց թրաֆիքինգը ձևավորվել է որպես մարդու իրավունքների առավել ծանր բազմաշերտ խախտումներից մեկը: Հրատապ բնույթ են ստացել մարդկանց թրաֆիքինգին վերաբերող սոցիալական ու իրավական այնպիսի հիմնախնդիրներ, որոնք ունեն սահմանադրաիրավական բնույթ, առնչվում են ոչ միայն Սահմանադրության արժեբանությանը, այլ սահմանադրականության երաշխավորման հիմնախնդիրներին: Մասնավորապես, թեման սոցիալական առումով արդիականություն է ձեռք բերում պայմանավորված այն հանգամանքով, որ մարդկանց թրաֆիքինգը, ըստ էության, մարդու արժանապատվության առևտրայնացում ենթադրող երևույթ է: Այն ուղղակիորեն հարվածում է հասարակության «սոցիալական իմունիտետին»՝ քայքայելով պետության պաշտպանության նկատմամբ վստահությունը, իրավական պաշտպանվածության զգացումը սոցիալական համերաշխությունը: Սոցիալական իմունիտետը մեր կողմից դիտարկվում է որպես հասարակության կոլեկտիվ կարողունակություն՝ վերարտադրելու վարքի կայուն ու որոշակիության սկզբունքին համարժեք նորմեր չեզոքացնելու սպառնալիքները՝ առանց քայքայիչ հետևանքների:

Չնայած ներկա միջազգային զարգացումներին, Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական համակարգը, հատկապես, դրա սահմանադրաիրավական խորքային հիմքերը շարունակում են մնալ ոչ բավարար ուսումնասիրված: Տեսական գրականությունում առկա է մարդկանց թրաֆիքինգի՝ որպես մարդու իրավունքների խախտման վերաբերյալ հետազոտությունների պակաս:

Միևնույն ժամանակ, սահմանադրաիրավական տեսանկյունից մարդկանց թրաֆիքինգը ձեռք է բերում նոր բովանդակություն՝ դիտարկվելով որպես սահմանադրական կարգի արժեքային հիմքերի դեմ ուղղված երևույթ, որը ենթադրում է պետության պոզիտիվ պարտականությունների բարձր մակարդակ: Մարդու արժանապատվության հիմնարար նշանակության, իրավունքի գերակայության մարդու իրավունքների անմիջական կիրառելիության համատեքստում մարդկանց թրաֆիքինգը բացահայտում է այն կառուցվածքային խոցելիությունները, որոնք թույլ են տալիս շահագործումը: Այսպիսով, այն չի սահմանափակվում առանձին իրավախախտմամբ, այլ հանդիսանում է սահմանադրական պետության արդյունավետության ցուցիչ՝ ցույց տալով, թե որքանով է պետությունը ի վիճակի կանխատեսել ռիսկերը ապահովել մարդու իրավունքների իրական պաշտպանությունը:

Պատերազմներն ու տեղահանությունները, տեղեկատվության հա-

ղորդակցության տեխնոլոգիաների կիրառումը առցանց միջավայրում սեռական շահագործման նոր ձևերը, միգրացիոն սոցիալտնտեսական զարգացումները, պարտքային կամ աշխատանքային ստրկության թաքնված մեխանիզմները իրենց հերթին առաջ են բերում մարդկանց թրաֆիքինգի նոր ձևեր դրսևորումներ, որոնք բարդացնում են դրա հայտնաբերման, կանխարգելման իրավական գնահատման գործընթացները: Թվային միջավայրում գլոբալացված տնտեսության պայմաններում շահագործման կառուցակարգերը դառնում են առավել թաքնված բազմաշերտ, ինչը պահանջում է իրավական նոր մոտեցումներ պետության առավել ակտիվ կանխարգելիչ քաղաքականություն:

Ժամանակակից իրավակարգերում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը հիմնված է երեք հիմնական ուղղությունների վրա՝ քրեականացում, զոհերի պաշտպանություն կանխարգելում, սակայն ժամանակակից մոտեցումները առաջնահերթություն են տալիս կանխարգելիչ զոհակենտրոն քաղաքականությանը:

Մարդկանց թրաֆիքինգի շահագործման կանխարգելման հրատապության պայմաններում սահմանադրահիրավական հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ պետությունները դեռևս հիմնականում գործում են հետադարձ արձագանքի՝ առավելապես հանցանք կատարած անձին պատասխանատվության ենթարկելու տրամաբանությամբ, մինչդեռ ժամանակակից ռիսկերը պահանջում են կանխարգելիչ, վաղ ախտորոշիչ համակարգային սահմանադրական մեխանիզմներ: Ավելին, այն ցույց է տալիս, թե որքանով է պետությունը ունակ պաշտպանելու մարդու արժանապատվությունը ոչ միայն նորմատիվորեն, այլ իրական սոցիալական հարաբերություններում: Հայաստանի համար խնդիրը առավել զգայուն է հաշվի առնելով արտագնա աշխատանքային միգրացիան, սոցիալտնտեսական անհավասարությունները, պատերազմական հետևանքները, անչափահասների կանանց խոցելիությունը, տարածաշրջանային ռիսկերը:

Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական կառուցակարգային համակարգը թե զարգանում է, սակայն սահմանադրահիրավական տեսանկյունից դրա համապարփակ, փոխգործակցային համակարգային բաղադրիչի վերաբերյալ ուսումնասիրությունները շարունակում են մնալ սահմանափակ: Հատկապես պոզիտիվ պարտականությունների՝ երաշխավորելու, ապահովելու պաշտպանելու եռամիասնության խորքային վերլուծությունը, ինչպես նա մարդկանց թրաֆիքինգի ընկալումը որպես սահմանադրական պետության գործնական կարողության ցուցիչ, բավարար չափով ուսումնասիրված չեն:

Այս համատեքստում առանձնացվել են հիմնարար

սահմանադրաիրավական խնդիրներ, որոնք գիտական նոր մոտեցումների կարիք ունեն դարձել են մեր կողմից իրականացված համալիր վերլուծության առարկան: Մասնավորապես, մարդկանց թրաֆիքինգը մարդու արժանապատվության կոպիտ խախտում է, ինչը պահանջում է արժանապատվությունը դիտարկել ոչ միայն որպես հետագա պաշտպանության հիմք, այլ որպես կանխարգելիչ սահմանադրական չափանիշ: Այս համատեքստում մարդու իրավունքների խախտումից ձեռնպահ մնալը ուն զուգահեռ, պետության պոզիտիվ պարտականությունները ներառում են մարդկանց թրաֆիքինգի շահագործման համար խոցելի սոցիալական միջավայրերի կանխարգելումը: Միաժամանակ, սոցիալական պետության գաղափարը, որպես սոցիալական աջակցության համակարգին զուգահեռ պետք է ընկալվի որպես մարդու խոցելիության վաղ հայտնաբերման կանխարգելման սահմանադրական գործիք:

Այսօր առանձնահատուկ կարևորություն է ստանում նա թվային միջավայրի սահմանադրական կարգավորումը, քանի որ մարդկանց թրաֆիքինգի զգալի մասը տեղափոխվել է առցանց տիրույթ, ինչը պահանջում է մարդու իրավունքների պաշտպանության պետության պոզիտիվ պարտավորությունների վերաիմաստավորում: Այս համատեքստում կարևոր է նա պետության պոզիտիվ պարտականությունների սահմանների հստակեցումը, քանի որ ժամանակակից իրավունքում պետության պատասխանատվությունը տարածվում է ոչ միայն գործողությունների, այլ անգործության վրա, մինչդեռ մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման արդյունավետության կանխարգելիչ միջոցառումների բավարարության գնահատման չափանիշները դեռևս ամբողջությամբ ձևավորված չեն:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը տեսական հիմքերը: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հիմնախնդիրը լայնորեն ուսումնասիրվել է միջազգային իրավագիտության մեջ, սակայն դրա սահմանադրաիրավական ընկալումը շարունակում է մնալ հարաբերականորեն չզարգացած: Գիտական գրականության գերակշիռ մասը կենտրոնացած է քրեական իրավունքի մարդու իրավունքների շրջանակներում կատարվող վերլուծությունների վրա՝ առանց դրանք ամբողջականորեն կապելու սահմանադրական արժեքների պետության պոզիտիվ պարտականությունների համակարգի հետ:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում իրավունքահեն մոտեցման տեսական հիմքերը կառուցվում են այն սկզբունքի վրա, որ մարդու առանձին իրավունքներ պետության կողմից շնորհվող բարիքներ չեն, այլ մարդու էությանը ներհատուկ, ի ծնե տրված անօտարելի արժեքներ են: Այս

գաղափարը գիտական գրականության մեջ հիմնավորում են այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Սթիվեն Փ. Մարքսը Ջեք Դոնելլին, ովքեր պնդում են, որ մարդու իրավունքները պետք է ընկալվեն որպես պետության վրա դրված սահմանադրական ու իրավական սահմանափակումներ պատկանում են յուրաքանչյուրին այն պարզ պատճառով, որ նա մարդ է: Հ. Մ. Ստեփանյանի պնդմամբ՝ պետության նպատակը ոչ թե ժողովրդի ընդհանուր բարիքը, այլ քաղաքացիների ազատությունն ապահովելն է, և նման պետությունն իրավական պետություն է, որին բնորոշ են մի շարք սկզբունքներ, այդ թվում՝ իրավունքի գերակայության սկզբունքը: Միջազգային իրավական շրջանակի, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մարմինների Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիայի տեսանկյունից, պահանջվում է թրաֆիքինգը դիտարկել ոչ միայն որպես քրեական հանցագործություն, այլ առաջին հերթին որպես մարդու իրավունքների արժանապատվության սահմանադրական պաշտպանության խնդիր:

Մարդու արժանապատվությունը որպես ինքնաբավ արժեք համաչափության սկզբունքի գնահատման չափանիշ, ինչպես նա սահմանադրական մշտադիտարկման ու ախտորոշման հայեցակարգերը հետազոտության մեջ զարգացվել են Վ. Ն. Այվազյանի, Ք. Ալեքսանյանի, Ռ. Գևորգյանի, Գ. Բ. Դանիելյանի, Ա. Ա. Մանասյանի, Հ. Սարգսյանի Գ. Գ. Հարությունյանի աշխատությունների հիման վրա: Պետություններից ակնկալվում է համապարփակ արձագանք՝ ուղղված զոհերի պաշտպանությանն ու իրավունքների վերականգնմանը:

Այս իրավունքահեն զոհակենտրոն մոտեցումն ակադեմիական մակարդակում խորապես զարգացնում են ԵԽ կոնվենցիան մեկնաբանող հեղինակներ Ջ. Պլանիցերը Հ. Սաքսը: Նրանց աշխատություններում ընդգծվում է, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետ համակարգ չի կարող գոյություն ունենալ առանց զոհի իրավական սուբյեկտայնության ճանաչման նրան սոցիալական վերաինտեգրման ծրագրերով ապահովելու: Ըստ հեղինակների՝ փոխհատուցումը զուտ ֆինանսական միջոց չէ, այլ պետության կողմից ընդունված պատասխանատվության զոհի արժանապատվության վերականգնման ձև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի վրա խարսխված գիտական վերլուծություններում Ռ. Պատին, Վ. Ստոյանովան, Վ. Տուրանյանինը Յ. Ստանիսավլևիչը պետության դերը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում հետադարձ արձագանքողից վերափոխում են որպես ռիսկերի նախաձեռնողական կառավարման շահագործումը կանխելու

պատասխանատու սուբյեկտի: Այս շրջանակն է՛լ ավելի է ամրապնդվում զոհերի պաշտպանության նրանց նկատմամբ պատասխանատվությունից ազատելու սկզբունքի հիմնավորմամբ (Ռ. Պիոտրովիչ, Լ. Սորրենտինո), ինչպես նա քրեական արդարադատության արձագանքը որպես բարդ, փոխկապակցված համակարգ դիտարկելու անհրաժեշտությամբ (Մ. վան դեր Վատ, Ա. վան դեր Վեսթհույզեն):

Գիտական գրականության մեջ հատուկ տեղ է զբաղեցնում խոցելիության բազմաշերտ միջհատվող բնույթի վերլուծությունը (Ջ. Հեյնս): Այս համատեքստում խորապես ուսումնասիրվել են գենդերային անհավասարությունն ու սեռական շահագործումը (Ն. Ա. Դեշպանդե, Ն.Մ. Նուր, Ս. Պ. Գոմես, Ա. Ի. Սանի), ինչպես նա միգրացիոն հոսքերում (Ա. Պիյնենբուրգ, Կ. Ռայկեն), կլիմայական ճգնաժամերում (Ն. Մոլինարի) «փրկագնով թրաֆիքինգի» դեպքերում ապօրինի տեղափոխման ու շահագործման խաչվող ռիսկերը (Կ. Սմիթս, Մ. Վան Ռեյզեն, Մ. Վիրտց, Ա. Սմիթս): Առանձնահատուկ ուշադրության են արժանացել երեխայի թրաֆիքինգի ինստիտուցիոնալ շահագործման հիմնախնդիրները, տրավմատիկ կապվածությունը մանկատներում խոցելիությունը (Ռ. Ջ. Ն. Գաչանջա, Գ. Մարտինյո, Մ. Գոնսալվես, Մ. Մատոս, Ջ. Գրինբաում, Դ. Կապլան, Ն. Բոդրիկ, Մ. Հ. վան Իյզենդորն, Ռ. Նեեպ, Ս. Դեք, Կ. վան Դոր, Մ. Փաուել), ինչպես նա հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակության չարաշահումը (Գ. Դևիդսոն, Լ. Բրոֆի, Ջ. Քեմփբել): Ոլորտային լրջագույն բացահայտումներից են նա քրեակատարողական փակ հաստատություններում ազատությունից զրկվածների կրկնազոհացման, հարկադիր աշխատանքի մշտադիտարկման բացերի վերհանումը (Կ. Ֆրագա Ռիզո, Կ. Ջ. Վրետման, Ջ. Լուտ, Ռ. Ռինգլեր, Կ. Վիլյակամպա, Ն. Տորրես, Լ. Բ. Հիլլ, Մ. Կ. Հեֆներ, Է. Կաչինսկա, Տ. Վ. Հարդինգ, Դ. Բերտրան, Ս. վան դեր Վալկ, Մ. Ռոգան): Կանանց երեխաների շահագործման հիմքում ընկած ինստիտուցիոնալ, մշակութային գործոնները, լատենտային վտանգներն ու իրավական բացերը վերլուծվել են հայրենական հետազոտությունների լույսի ներքո՝ հիմնվելով Հ. Աղավելյանի, Մ. Անտոնյանի, Յու. Մելքումյանի, Վ. Օդինոկովայի, Ա. Սարգսյանի, Ա. Սահակյանի, Ե. Վարդանյանի այլոց մոտեցումների վրա:

Վերոնշյալ ռիսկերը հասցեագրելու նպատակով առաջադեմ գրականությունը պնդում է, որ զոհերի նույնացումը չպետք է կախված լինի քրեական արդարադատությունից կամ «համաձայնության» խնդրահարույց ընկալումներից, իսկ զուտ քրեական արդարադատության արձագանքը հաճախ ձախողում է իրական զոհերի հայտնաբերումը (Ա.Է. Հեալի, Կ. Բարրիկ, Ռ. Պֆեֆեր, Ս. Տուելլեր, Ս.Վ. Ջոնս, Ա. Ֆարրել, Մ. Դանկ, Ի. դե Վրիես): Փոխարենը առաջնային է դառնում զոհակենտրոն տրավմայի

հաշվառմամբ մոտեցումը, որտեղ կենտրոնական դեր ունեն սոցիալական առողջապահական ոլորտի մասնագետները (Ջ. Պլանիցեր, Հ. Սաքս, Դ.Ռ. Հոջ, Դ. Օկեչ, Ն. Հանսեն, Վ. Հովարդ, Կ.Հ. Վելլանի, Ն.Դ. Քրիստոֆ, Ս. Վիլյատորո, Պ. Վելասկես, Դ. Գարսիա): Համակարգի կայունությունն ապահովելու գործում շեշտվում է նա մարդու իրավունքների ազգային հաստատությունների Ազգային զեկուցողների կողմից իրականացվող անկախ մշտադիտարկման անփոխարինելի դերը (Ա. Ա. Արոնովից, Ս. Է. Հագեման, Ջ. Ռուտայ):

Հետազոտության օբյեկտը առարկան: Հետազոտության օբյեկտն են մարդկանց թրաֆիքինգի դրա դեմ պայքարի հետ կապված հասարակական հարաբերությունները, իսկ առարկան՝ մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիության ձևավորման պայմանները, պետության պոզիտիվ պարտականությունների շրջանակում դրա կանխարգելման, նույնացման պաշտպանության կառուցակարգերը, ինչպես նա դրանց կիրառության ընթացքում ծագող իրավական ինստիտուցիոնալ հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը խնդիրները: Հետազոտության նպատակն է բացահայտել մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիության բազմաշերտ բնույթը սահմանադրաիրավական մարդու իրավունքների համատեքստում, վերհանել պետության պոզիտիվ պարտականությունների բովանդակությունն ու սահմանադրաիրավական կառուցակարգերի միջոցով դրանց իրականացման հիմնախնդիրները, ինչպես նա ձևակերպել այնպիսի մոտեցումներ մեկնաբանություններ, որոնք համահունչ կլինեն միջազգային չափանիշներին ազգային իրավական համակարգի պահանջներին:

Հետազոտության խնդիրներն են՝

1. *Մարդկանց թրաֆիքինգի սահմանադրաիրավական արժեբանական բնույթի բացահայտումը:* Հետազոտության առաջնային խնդիրներից է վերլուծել մարդկանց թրաֆիքինգը ոչ միայն որպես հան-ցագործություն, այլ որպես մարդու արժանապատվության, անձնական ազատության իրավական սուբյեկտայնության դեմ ուղղված խախտում, որը խաթարում է սահմանադրական կարգի արժեքային հիմքերը:

2. *Պետության պոզիտիվ պարտականությունների բովանդակության կառուցվածքի վերլուծությունը:* Աշխատանքը խնդիր է դնում վերհանել մեկնաբանել պետության կողմից մարդկանց իրավունքների երաշխավոր-ման, ապահովման պաշտպանության սահմանադրական միջազգային պարտականությունների եռամիասնությունը՝ այն կիրառելով խոցելիության հասցագրման միջոցով մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, զոհերի վաղ նույնացման պաշտպանության ոլորտներում:

3. *Սահմանադրական մշտադիտարկման անկախ մասնագիտական կառուցակարգի մոդելի մշակումը:* Խնդիր է դրվել ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը հիմնավորել Մարդու իրավունքների պաշտպանին Ազգային զեկուցողի մանդատով օժտելու անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա իրականացնել անկախ մասնագիտացված մշտադիտարկում:

4. *Խոցելիության բազմաշերտ միջհատվող բնույթի գնահատումը պետության սահմանադրական պարտականությունները:* Հետազոտությունը նպատակ ունի բացահայտել այն սոցիալական, տնտեսական, միգրացիոն, առողջական, գենդերային ինստիտուցիոնալ գործոնները, որոնց համակցված ազդեցությունը ձևավորում է մարդկանց թրաֆիքինգի ռիսկեր հատկապես առավել խոցելի խմբերի շրջանում՝ բացահայտելով պետության սահմանադրական պարտականությունները:

5. *Ազգային ուղղորդման կառուցակարգի՝ որպես պետության սահմանադրական պարտականությունների իրականացման արդյունավետ գործիք:* Աշխատանքը վերլուծում է հավանական զոհերի նախանույնացման ու վաղ հայտնաբերման գործընթացում առաջնային շփման պետական մարմինների դերակատարությունը:

Հետազոտության իրավական փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ հիմքը կազմել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մարդու իրավունքների պաշտպանության ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունը, մասնավորապես՝ «Մարդկանց թրաֆիքինգի շահագործման ենթարկված անձանց նույնացման աջակցության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նա միջազգային իրավական աղբյուրներն ու Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները: Հետազոտության փորձառական հիմքը կազմել են ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, ինչպես նա օտարերկրյա պետությունների իրավական կարգավորումներն ու պրակտիկան:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել են ընդհանուր գիտական մասնավոր գիտական մեթոդները, մասնավորապես՝ ինդուկցիայի դեդուկցիայի, անալիզի սինթեզի, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական, ձևական իրավաբանական, իրավական մոդելավորման, ինչպես նա պրակտիկայի վերլուծության մեթոդները: Դրանք կիրառվել են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական ինստիտուցիոնալ կառուցակարգերի, իրավակարգավորումների, ինչպես նա այլ փաստաթղթերի

ուսումնասիրության նպատակով:

Միաժամանակ, ատենախոսության կիրառական հիմնախնդիրների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային ուղղորդման կառուցակարգի գործնական մարտահրավերների բացահայտման համար կիրառվել են նա էմպիրիկ սոցիոլոգիական-իրավական մեթոդներ, այդ թվում՝ մասնակի կանոնակարգմամբ հարցազրույցներ վիճակագրական տվյալների վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը զոհերի իրավունքների պաշտպանությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համալիր կերպով ուսումնասիրվում են որպես մարդու արժանապատվության, սոցիալական պետության սահմանադրական անվտանգության փոխկապակցված սահմանադրաիրավական համակարգ: Թեման դուրս բերելով զուտ քրեաիրավական շրջանակից՝ մշակվել են պետության պոզիտիվ պարտականությունների, սահմանադրական մշտադիտարկման պաշտպանության նոր մոտեցումներ: Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ հիմնական դրույթներում՝

1. *Սահմանադրական կարգի «սոցիալական իմունիտետի» հայեցակարգ:* Մարդկանց թրաֆիքինգը հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում է որպես սահմանադրական կարգի արժեքային հիմքերի դեմ ուղղված համակարգային երևույթ սոցիալական պետության խոցելիության ցուցիչ, ոչ թե որպես մեկուսի քրեաիրավական խախտում: Ձևավորվում է «սոցիալական իմունիտետի» սահմանադրաիրավական հայեցակարգը՝ որպես հասարակության կոլեկտիվ կարողունակության պետության սահմանադրական կարողության չափանիշ.

2. *Պոզիտիվ սահմանադրական պարտականությունների եռամիասնական մոդել:* Մշակվում ներդրվում է պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունների եռամիասնական կառուցվածքը (երաշխավորել - ապահովել - պաշտպանել) մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, վաղ հայտնաբերման զոհերի պաշտպանության ոլորտներում կիրառելու համար: Ապացուցվում է, որ Հայաստանի Հանրապետությունում այս եռամիասնությունն ամբողջությամբ հնարավոր չէ երաշխավորել առանց համակարգային բարեփոխումների.

3. *«Կանխարգելիչ սահմանադրական մշտադիտարկում» Ազգային զեկուցողի ինստիտուտ:* Առաջարկվում է «կանխարգելիչ սահմանադրական մշտադիտարկման» նոր հայեցակարգ՝ որպես հետգործող պատժիչ մոդելի այլընտրանք: Հայեցակարգը ենթադրում է սոցիալական խոցելիության, միգրացիոն ռիսկերի, թվային շահագործման կառուցակարգային բացերի

վաղ ախտորոշման սահմանադրական մեխանիզմ, որն ուղեկցվում է այս ոլորտում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին Ազգային զեկուցողի մանդատով օժտելու հիմնավորմամբ.

4. *Խոցելիության միջհատվող սահմանադրաիրավական մոտեցում:* Մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունն առաջին անգամ վերլուծվում է միջհատվող սահմանադրաիրավական մոտեցմամբ. ցույց է տրվում, որ գենդերային, սոցիալտնտեսական, միգրացիոն, ինստիտուցիոնալ թվային գործոնների համակցված ազդեցությունն է ձևավորում շահագործման ռիսկը, ինչը պահանջում է ոչ թե մեկ ընդհանուր, այլ տարբերակված սահմանադրական արձագանք: Միաժամանակ զոհերի պաշտպանությունը դիտարկվում է ոչ թե սոսկ որպես քրեադատավարական երաշխիք, այլ որպես սահմանադրական կարգի անմիջական բաղադրիչ, իսկ վերականգնողական արդարադատությունը՝ մարդու արժանապատվության վերականգնման սահմանադրական մեխանիզմ.

5. *«Թվային սահմանադրական պաշտպանության» հայեցակարգ:* Հիմնավորվում է թվային սահմանադրական պաշտպանության հայեցակարգը՝ ցույց տալով, որ թրաֆիքինգի (մասնավորապես՝ հավաքագրման անձնական տվյալների օգտագործման) թվային հարթակներ տեղաշարժը ծնում է պետության նոր պոզիտիվ սահմանադրական պարտականություններ՝ ալգորիթմական հաշվետվողականության, հարթակների հանրային պատասխանատվության անչափահասների առցանց պաշտպանության ոլորտներում, որոնք Հայաստանի գործող սահմանադրաիրավական կարգավորումներում բացակայում են.

6. *Ինստիտուցիոնալ շահագործման պետության պարտականությունների ձախողման բացահայտում:* Ցույց է տրվում, որ փակ ու կիսափակ ինստիտուցիոնալ միջավայրերը՝ հոգեբուժական հաստատություններ, քրեակատարողական հիմնարկներ, գործունակության սահմանափակումը, ձևավորում են շահագործման կառուցվածքային պայմաններ, որոնք ուղղակիորեն մատնանշում են պետության պոզիտիվ պարտականությունների ձախողումը, ոչ պարզապես անհատական իրավախախտումներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Մարդկանց թրաֆիքինգը սահմանադրաիրավական վերլուծության առարկա է ոչ թե որպես քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն կամ կազմակերպված հանցավորության ձև, այլ որպես մարդու արժանապատվության սահմանադրական էության ժխտման, սոցիալական պետության սկզբունքի թուլացման սահմանադրական կարգի գործնական կարողունակության անբավարարության *համակցված* արտահայտություն:

2. Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձի պաշտպանությունը սահմանադրական կարգի *անմիջական* բաղադրիչ է, ոչ թե քրեադատավարական կարգավիճակի ածանցյալ: Զոհը հանդիսանում է արժանապատվության վերականգնման, սոցիալական վերաինտեգրման հատուկ երաշխիքների կրող *ինքնուրույն* սահմանադրական սուբյեկտ, որի կարգավիճակը չի կարող պայմանավորվել քրեական վարույթի առկայությամբ կամ իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ:

3. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում պետության պարտականությունն ունի *պոզիտիվ* սահմանադրական բնույթ, որն ընդգրկում է կանխարգելման, վաղ հայտնաբերման, խոցելի խմբերի պաշտպանության, զոհերի վերականգնման ռիսկային միջավայրերի չեզոքացման *ակտիվ* գործողության պարտականություն՝ անկախ հանցագործության փաստի հաստատումից:

4. Մարդկանց թրաֆիքինգի դեմ արդյունավետ սահմանադրական պայքարը պահանջում է «հետգործող պատժիչ մոդելից» «կանխարգելիչ սահմանադրական պաշտպանության մոդելի» անցում, որի կենտրոնական գործիքն է սոցիալական խոցելիության, ինստիտուցիոնալ ռիսկերի թվային շահագործման *վաղ ախտորոշման* սահմանադրական մշտադիտարկման ազգային մասնագիտացված կառուցակարգը:

5. Մարդկանց թրաֆիքինգի որոշ փուլերի տեղափոխումը թվային հարթակներ արդիականացնում է «թվային սահմանադրական պաշտպանության» հայեցակարգի անհրաժեշտությունը: Պետության պոզիտիվ պարտականությունն ընդգրկում է թվային հավաքագրման կանխարգելումը, ալգորիթմական հաշվետվողականությունը հարթակների հանրային սահմանադրական պատասխանատվությունը, որոնք Հայաստանի Հանրապետության գործող կարգավորումներում *բացակայում* են:

6. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների սահմանադրական լեգիտիմությունը պայմանավորված է *համաչափության* սկզբունքի խստիվ պահպանմամբ. անվտանգության ապահովումը չի կարող արդարացնել զանգվածային վերահսկողությունը, խտրական վերաբերմունքը միգրանտների կամ խոցելի խմբերի նկատմամբ, կամ անձնական կյանքի անհամաչափ սահմանափակումը:

7. Մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունն արդյունք է սոցիալտնտեսական, գենդերային, միգրացիոն, ինստիտուցիոնալ թվային գործոնների *բազմաշերտ* համակցության, ինչն առաջ է բերում պետության *տարբերակված* սահմանադրական պարտականություն՝ առավել խոցելի խմբերի (կանայք, երեխաներ, հոգեկան առողջության խնդիրներ

ունեցողներ, ազատությունից զրկվածներ, միգրանտներ) նկատմամբ *ուժեղացված* սահմանադրական պաշտպանության ձևաչափով:

8. Խառը միգրացիոն հոսքերում մարդկանց թրաֆիքինգի ապօրինի միգրացիայի *հստակ տարբերակումը* հանդիսանում է «չվերադարձելիության» սկզբունքի ու միջազգային պաշտպանության արդյունավետ կիրառման *նախապայման*. տարբերակման ձախողումն ուղղակիորեն առաջացնում է պետության սահմանադրական պատասխանատվություն:

Հետազոտության տեսական գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիության բազմաշերտ բնույթի պետության պոզիտիվ պարտականությունների սահմանադրաիրավական հայեցակարգային մոտեցումների կատարելագործման փորձն է՝ սահմանադրականության մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության համատեքստում, ինչպես նա այդ երևույթի բնույթի տեսական վերաիմաստավորումը՝ որպես մարդու արժանապատվության ոտնահարման սահմանադրական պետության «գործնական կարողունակության» ցուցիչ:

Ատենախոսությունում ներկայացված վերլուծությունները, մեկնաբանությունները եզրահանգումները կարող են որոշակի նշանակություն ունենալ սահմանադրական իրավունքի ու մարդու իրավունքների գիտության զարգացման համար կիրառվել իրավաստեղծ գործունեության մեջ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի թվով 8 գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում ժողովածուներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ինը ենթագլուխներից, եզրակացությունից օգտագործված իրավական ակտերի, գրականության պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը խնդիրները, օբյեկտը առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական գործնական նշանակությունը,

հետազոտության արդյունքների փորձարկումը աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ **««Մարդկանց թրաֆիքինգ» հասկացության սահմանադրահիրավական հիմնական բնութագրիչները պետության պարտականությունների շրջանակը»** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Մարդու արժանապատվությունը պետության սոցիալական բաղադրիչը որպես մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման սահմանադրական հիմք» վերտառությամբ 1.1 **«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը սահմանադրահիրավական մարդու իրավունքների դիտանկյունից. նյութական հիմքեր ընթացակարգային պարտականություններ»** վերտառությամբ 1.2 ենթագլուխներում համապատասխանաբար քննարկվել են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը որպես մարդու արժանապատվության հիմնարար իրավունքների պաշտպանության սահմանադրական խնդիր, ինչպես նա վերլուծվել է պետության պոզիտիվ պարտականությունների (երաշխավորել, ապահովել պաշտպանել) եռամիասնությունը: **«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային մշտադիտարկումը՝ որպես պետության սահմանադրահիրավական պարտականությունների ապահովման կառուցակարգ»** վերտառությամբ 1.3 պարագրաֆում ուսումնասիրվել է Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրահիրավական մանդատը, ինչպես նա միջազգային լավագույն փորձի լույսի ներքո հիմնավորվել է Ազգային զեկուցողի անկախ մշտադիտարկման կառուցակարգի ձևավորման անհրաժեշտությունը:

Երկրորդ գլուխը՝ «Մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիության բազմաշերտ բնույթը պետության պոզիտիվ պարտականությունների զարգացումը» վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից: **«Կանանց երեխաների խոցելիությունը մարդկանց թրաֆիքինգի համատեքստում»** վերտառությամբ 2.1 **«Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խոցելի դիրքի չարաշահումը թրաֆիքինգը կանխելու իրավական կառուցակարգերը»** վերտառությամբ 2.2 ենթագլուխներում քննարկվել են շահագործման գենդերային, տարիքային ու կառուցվածքային ռիսկերը, ինչպես նա հոգեկան առողջության սոցիալական խնամքի հաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խոցելիության նվազեցման պաշտպանության երաշխիքները: **«Մարդկանց թրաֆիքինգի շահագործման դեմ պայքարը քրեակատարողական համակարգում»** վերտառությամբ 2.3 **«Միգրացիոն գործընթացներում խոցելիության ձևավորումը մարդկանց թրաֆիքինգի ռիսկերը»** վերտառությամբ 2.4

ենթագլուխներում հետազոտվել են ազատությունից զրկված անձանց միջավայրում, ինչպես նա փախստականների ու ապաստան հայցողների միգրացիոն հոսքերում շահագործման ռիսկերը՝ մատնանշելով ինստիտուցիոնալ արձագանքի մարտահրավերները անհրաժեշտ լուծումները:

Երրորդ գլուխը՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների ապահովման արդի հիմնահարցերը պաշտպանության իրավական ու կառուցակարգային երաշխիքների ամրապնդման հիմնական ուղղությունները» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից: **«Մարդկանց թրաֆիքինգի շահագործման դեմ պայքարի օրենսդրական կարգավորումները իրավասու մարմինների գործառույթները»** վերտառությամբ 3.1 ենթագլխում վերլուծվել են ոլորտի իրավական քաղաքական համակարգը, ինստիտուտները նրանց կողմից զոհերի իրավունքների պաշտպանության երաշխիքների կիրառումը: **«Մարդկանց թրաֆիքինգի շահագործման ենթարկված անձանց ազգային ուղղորդման կառուցակարգի գործնական փուլերը, դերակատարները համակարգումը»** վերտառությամբ 3.2 ենթագլխում ուսումնասիրվել են զոհերի հայտնաբերման ուղղորդման գործընթացի բացերը՝ նախանույնացման փուլից մինչ Հանձնաժողովի կողմից պաշտոնական նույնացում, առաջարկվել են ազգային ուղղորդման կառուցակարգերի հզորացման ստանդարտ գործառնական ընթացակարգերի ներդրման կոնկրետ ուղիներ:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվում է, որ մարդկանց թրաֆիքինգ հասկացության սահմանադրաիրավական հիմնական բնութագրիչների պետության պարտականությունների շրջանակի վերաբերյալ վերլուծությամբ կարելի է եզրակացնել, որ **մարդկանց թրաֆիքինգը սահմանադրաիրավական տեսանկյունից պետք է դիտարկվի որպես մարդու արժանապատվության, ազատության իրավական սուբյեկտայնության համակարգային խաթարում**, որը դուրս է քրեաիրավական նեղ շրջանակներից ուղղված է սահմանադրական կարգի արժեքային հիմքերի դեմ: Այն բացահայտում է ոչ միայն առանձին իրավախախտումներ, այլ այն կառուցվածքային խոցելիությունները, որոնք ձևավորվում են սոցիալական, տնտեսական ինստիտուցիոնալ գործոնների փոխազդեցության արդյունքում: Այս համատեքստում մարդկանց թրաֆիքինգի առկայությունը վկայում է այն մասին, որ պետության կողմից երաշխավորվող ապահովվող իրավունքների համակարգը չի գործել բավարար արդյունավետությամբ, ինչի հետևանքով անձը դուրս է մնացել սահմանադրական պաշտպանության իրական դաշտից:

Միաժամանակ, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը վերածվում է **սահմանադրական պետության գործնական կարողության գնահատման չափանիշի՝** ցույց տալով, թե որքանով է պետությունը ի վիճակի իրականացնելու իր պոզիտիվ պարտականությունները պաշտպանել մարդու իրավունքները: Այս մոտեցմամբ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը չի կարող սահմանափակվել միայն քրեական արդարադատության միջոցներով, այլ պահանջում է շարունակական համակարգային արձագանք՝ ուղղված ռիսկերի կանխատեսմանը, խոցելիության նվազեցմանը մարդու իրավունքների ու արժանապատվության իրական պաշտպանության ապահովմանը: Հետևաբար, մարդկանց թրաֆիքինգն այն առանցքային ոլորտներից մեկն է, որտեղ առավել հստակ դրսևորվում է սահմանադրական պետության մարդակենտրոն բնույթը նրա ինստիտուցիոնալ արդյունավետությունը:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ազգային մշտադիտարկման բացակայությունը կամ դրա ինստիտուցիոնալ բացը առաջացնում են մի շարք կառուցվածքային խնդիրներ: Մարդու իրավունքների պաշտպանի մանդատը փաստացի ընդգրկում է զոհերի իրավունքների պաշտպանությունը, սակայն օրենքի մակարդակում բացակայում են նրա՝ որպես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասնագիտական մշտադիտարկման հստակ կարգավիճակը գործառույթների սահմանումը: Սա սահմանափակում է ոլորտում իրականացվող քաղաքականությունների ամբողջական գնահատման, գործողությունների ազգային ծրագրի անկախ վերլուծության պետական մարմինների գործունեության արդյունավետության համակարգային քննադատական դիտարկման հնարավորությունը:

Հաշվի առնելով միջազգային փորձը Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կառուցվածքը՝ առաջարկվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում «Մարդկանց թրաֆիքինգի շահագործման ենթարկված անձանց նույնացման աջակցման մասին» օրենքում ամրագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանը ԵԽ կոնվենցիայով նախատեսված Ազգային զեկուցող է: Առաջարկվող կառուցակարգը ենթադրում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ներսում ձևավորվում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային մշտադիտարկման գործառնական ու կառուցակարգային **մասնագիտացված համակարգ**, որը գործում է գործադիրից անկախ իրականացնում է քաղաքականությունների ու պրակտիկայի **նախնական (ex ante) հետադարձ (ex post) գնահատում**: Այն կապվում է տարեկան հաղորդման, թիրախային թեմատիկ

ուսումնասիրությունների պետական մարմինների առաջարկությունները կատարելուն հետևելու պարտադիր ընթացակարգերի հետ:

Օրենքով պետք է հստակ սահմանվեն տվյալ կառույցի լիազորությունները՝ ներառյալ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի պետական քաղաքականության գործողությունների ազգային ծրագրի անկախ գնահատումը, օրենսդրության պրակտիկայի միջազգային չափանիշներին համապատասխանության վերլուծությունը, խոցելի խմբերի շրջանում կանխարգելման արդյունավետության գնահատումը, Ազգային ժողովին տարեկան թեմատիկ հաղորդում ներկայացնելը, ինչպես նա պարտադիր քննարկման ենթակա առաջարկությունների ներկայացումը: Միաժամանակ անհրաժեշտ է նախատեսել բավարար ֆինանսական միջոցներ աշխատակազմի կանոնավոր վերապատրաստում:

Առաջարկվող լուծման առանցքային առավելությունն այն է, որ ստեղծվում է **գործադիրից անկախ գնահատման մշտական արտաքին դիտարկման մարմին**, որը կարող է նույն չափանիշներով դիտարկել թե՛ քաղաքականության արդյունքները, թե՛ տվյալների որակը, թե՛ կոնկրետ մարմինների արձագանքման արդյունավետությունը:

Միևնույն ժամանակ, ազգային մշտադիտարկման հիմնական առավելությունը միայն խախտումների արձանագրումը չէ, այլ **ռիսկերի վաղ բացահայտումը կանխարգելումը**: Այդ իմաստով Ազգային զեկուցողի գործառույթը պետք է կառուցվի «արմատական պատճառների» շուրջ՝ խոցելիության գործոններ, հավաքագրման/ շահագործման շղթայի թույլ օղակներ, համակարգային բացեր, ինչպես նա պետական միջամտությունների իրական ազդեցության գնահատում: Այս մոտեցումը թույլ է տալիս պետությանը կանխել կրկնազոհացումը նվազեցնել թրաֆիքինգի առաջացման հնարավորությունը՝ նախքան կոնկրետ դեպքերի զանգվածային դրսևորումները:

Մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիության բազմաշերտ բնույթի պետության պոզիտիվ պարտականությունների զարգացման մասին վերլուծությամբ կարելի է եզրակացնել, որ պետության սահմանադրական պարտականությունները ներառում են ոչ միայն զոհերի հայտնաբերումը, ուղղորդումը, աջակցությունը պաշտպանություն, ինչպես նա հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունը, այլ **խոցելիության հասցեագրման միջոցով մարդկանց թրաֆիքինգի շահագործման կանխարգելումը:** Մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու վտանգը, անհատական հանգամանքներով, ինչպիսիք են ֆիզիկական կամ հոգեկան առողջության խաթարման հետևանքով առաջացած կախվածությունը, պայմանավորված լինելուն զուգահեռ մեկնաբանվի

որպես կառուցվածքային գործոններով պայմանավորված երևույթ: Դա ներառում է աղքատությունը, սոցիալական մեկուսացումը, գենդերային անհավասարությունը, միգրացիոն գործընթացները փակ կամ վերահսկվող միջավայրերում գտնվելը: Այս մոտեցմամբ, քրեական արդարադատության ոլորտի մարտահրավեր լինելուն զոհգառ, մարդկանց թրաֆիքինգը դիտարկվում է որպես սոցիալական իրավական բազմաշերտ երևույթ, որի արդյունավետ հաղթահարումը պահանջում է խոցելիության տարբեր դրսևորումների խորքային ուսումնասիրություն դրանց հասցեագրմանն ուղղված համապարփակ պետական քաղաքականություն:

Նման կառուցվածքային խոցելիությունների հասցեագրման պայմաններում սոցիալական պետության գաղափարը չի կարող սահմանափակվել միայն աջակցությամբ. այն պետք է վերաիմաստավորվի որպես հասարակության «սոցիալական իմունային համակարգ»: Սոցիալական քաղաքականությունը պետք է ծառայի որպես սահմանադրական անվտանգության գործիք՝ ապահովելով մարդու խոցելիության վաղ փուլում ախտորոշումն ու վտանգների կանխումը:

Պետք է առանձնացնել այն միջավայրերն ու իրավիճակները, որտեղ խոցելիությունը առավել սուր է դրսևորվում՝ մասնավորապես կանանց երեխաների նկատմամբ ռիսկերը, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խոցելի դիրքի չարաշահման վտանգները, քրեակատարողական համակարգում ձևավորվող ռիսկերը միգրացիոն գործընթացներում առաջացող խոցելիությունները, ինչը հնարավորություն է տալիս գնահատել պետության իրավական ինստիտուցիոնալ արձագանքի արդյունավետությունը՝ այն դիտարկելով ոչ միայն մարդկանց թրաֆիքինգի հետևանքների հաղթահարման, այլ դրա առաջացմանը նպաստող պատճառների կանխարգելման տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում կանխարգելիչ միջոցառումների իրագործման ընթացքում պետության միջամտությունը պետք է խստորեն հիմնված լինի սահմանադրական համաչափության սկզբունքի վրա: Անվտանգության ապահովումը ռիսկերի վաղ ախտորոշումը չպետք է հանգեցնեն մարդու իրավունքների անհամաչափ սահմանափակման, զանգվածային վերահսկողության կամ խտրական վերաբերմունքի:

Առանձին խմբերի խոցելիությունը մարդկանց թրաֆիքինգի համատեքստում սոցիալական, իրավաքաղաքական կառուցվածքային խնդիր է, որը ձևավորվում է գենդերային անհավասարությունների, սոցիալ-տնտեսական սահմանափակումների ինստիտուցիոնալ բացերի փոխազդեցության արդյունքում: Այս խմբերը հաճախ ենթարկվում են

բազմաշերտ խոցելիությունների ազդեցությանը, որոնք մեծացնում են շահագործման ռիսկը սահմանափակում նրանց ինքնապաշտպանության իրավունքների իրականացման հնարավորությունները:

Այս համատեքստում անհրաժեշտ է դիտարկել խոցելիության պատճառները ոչ թե մեկուսացված, այլ փոխկապակցված համակարգում՝ առանձնացնելով ինչպես կառուցվածքային գործոնները, այնպես էլ պետության արձագանքի արդյունավետությունը: Կատարված վերլուծության արդյունքների հաշվառմամբ ստոր ներկայացվում են առաջարկվող քայլերը:

Քրեակատարողական հիմնարկներում զոհերի հայտնաբերման պաշտպանության ուղղությամբ կարող են ներդրվել առավել արդյունավետ կառուցակարգեր, ներառյալ՝ ռիսկերի կարիքների գնահատման գործիքներ, մարդկանց թրաֆիքինգի շահագործման դեպքերի բացահայտման ուղեցույցներ: Ուստի անհրաժեշտ է՝

- **մշակել հատուկ սկրինինգի գործիք**. ի տարբերություն ռիսկերի կարիքների գնահատման ընդհանուր մեխանիզմների՝ այն պետք է հիմնված լինի բացառապես մարդկանց թրաֆիքինգին շահագործմանը բնորոշ իրավական, հոգեբանական, սոցիալական ու իրավիճակային հատուկ ցուցիչների վրա.
- **հստակեցնել վարչակազմի գործողությունները.** հանցանքի մասին զուտ հաղորդում ներկայացնելուց զատ, վարչակազմը պետք է պարտավորվի ապահովել ենթադրյալ զոհերի ժամանակին ուղղորդումը՝ աջակցություն պաշտպանություն ստանալու նպատակով.
- **ներդնել պարտադիր, ոլորտային վերապատրաստումներ.** ընդհանրական նյութի փոխարեն՝ ուսուցումը պետք է կենտրոնանա քրեակատարողական համակարգի առանձնահատկությունների, իրավախախտների ու զոհերի տարբերակման գործնական հմտությունների վրա (օրինակ՝ դերախաղեր, հարցազրույցի տեխնիկա)՝ հայտնաբերման ցուցիչներն արդյունավետ կիրառելու համար:
- **ապահովել տվյալների միասնական հավաքագրում վերլուծություն.** բացահայտված դեպքերի ծավալի, դրսևորումների արմատական պատճառների համակարգված վերլուծությունը պետք է հիմք ծառայի ոլորտային քաղաքականության մշակման, գործնական լուծումների օրենսդրական փոփոխությունների համար:
- **ինտեգրել խոցելիության գնահատումը պատժի անհատական պլանավորման մեջ.** ռիսկերի գնահատումը պետք է հաշվի առնի տարիքային, հոգեկան առողջության նախկինում զոհ լինելու գործոնները՝ նպաստելով անձի ճիշտ տեղաբաշխմանն ու վերասոցիալականացմանը:

Այն պետք է իրականացվի վերապատրաստված մասնագետների կողմից պարբերաբար վերանայվի:

Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խոցելիության հասցեագրման, նրանց շրջանում մարդկանց թրաֆիքինգի շահագործման դեպքերի հայտնաբերման պաշտպանության ուղղությամբ կարող են ներդրվել առավել արդյունավետ կառուցակարգեր, ներառյալ՝ ռիսկերի գնահատման գործիքներ, անկախ վերահսկողության մեխանիզմներ ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Ուստի անհրաժեշտ է՝

- **արգելել հաստատության կողմից խնամակալությունը.** շահերի ակնհայտ բախումը շահագործումը կանխելու նպատակով օրենքով արգելել, որ հոգեբուժական կամ սոցիալական խնամքի հաստատությունը կամ աշխատողները ճանաչվեն գործունակությունից զրկված անձի խնամակալ.
- **սահմանել ռիսկերի գնահատման պարտադիր կառուցակարգ.** հոգեբուժական սոցիալական խնամքի բոլոր հաստատությունների համար ներդնել միատեսակ գնահատում (նոր ընդունվածների, միջադեպերի կամ բուժումը շարունակելու ժամանակ), որը կներառի շահագործման նշանների, ֆինանսական նյութական միջոցների վերահսկման, ինչպես նա անգործունակ ճանաչված անձի փաստացի ոչ հոժարակամ հոսպիտալացման ցուցիչները.
- **բարեփոխել հոսպիտալացման գործունակությունից զրկելու ընթացակարգերը.** օրենսդրորեն ամրագրել հաստատության կողմից դատարան դիմելու պարտադիր պահանջ, երբ ոչ հոժարակամ հոսպիտալացման հարցում անձի խնամակալի կարծիքները չեն համընկնում: Բացի այդ, համապարփակ գործունակությունից զրկելը պետք է դիտվի միայն որպես ծայրահեղ միջոց փոխարինվի աջակցված որոշում կայացնելու ու համաչափ սահմանափակման համակարգով.
- **ապահովել պարտադիր վերապատրաստումներ.** բժիշկների, սոցիալական աշխատողների, խնամակալության մարմինների անձնակազմի համար ներդնել որակյալ պարտադիր վերապատրաստումներ՝ մարդկանց թրաֆիքինգի շահագործման նշանների ճանաչման, խոցելիության գնահատման շահերի բախումը կանխելու վերաբերյալ:

Միգրացիոն գործընթացներում ներգրավված անձանց (փախստականներ, ապաստան հայցողներ, փաստաթղթեր չունեցող միգրանտներ) թրաֆիքինգից շահագործումից պաշտպանության ուղղությամբ կարող են ներդրվել առավել արդյունավետ կառուցակարգեր, ներառյալ՝ վաղ հայտնաբերման գործիքներ, նույնացման մեխանիզմներ միջազգային պաշտպանության երաշխիքներ: Ուստի անհրաժեշտ է՝

• **ամրապնդել նույնացման կառուցակարգերը միգրացիոն հոսքերում.** համապատասխանեցնել զոհերի հայտնաբերման մեխանիզմները պետության միգրացիոն զարգացումներին ապահովել դրանց կիրառումը անմիջապես սահմանային, միգրացիոն սոցիալական ծառայությունների մակարդակներում.

• **ապահովել չվերադարձելիության սկզբունքի կիրառումը.** մարդկանց թրաֆիքինգի վտանգը պետք է դիտարկվի որպես միջազգային պաշտպանության հիմք, իսկ պետությունից հեռացնելուց առաջ պետք է պարտադիր կերպով իրականացվի ռիսկերի պատշաճ գնահատում.

• **հստակ տարբերակել մարդկանց թրաֆիքինգն ապօրինի միգրացիայի կազմակերպումից.** զարգացնել մասնագետների կարողությունները՝ խառը հոսքերում այս երկու երևույթները ճիշտ տարբերակելու համար, ինչը թույլ կտա կանխել սխալ որակումը զոհերի գործողությունների ոչ իրավաչափ գնահատականը:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարը զոհերի իրավունքների երաշխավորումը պահանջում են վաղ հայտնաբերման ազգային ուղղորդման կառուցակարգերի հայեցակարգային վերափոխում, որը դուրս կգա զուտ իրավապահ արձագանքի տիրույթից՝ ինտեգրելով առողջապահական, կրթական, սոցիալական պաշտպանության այլ համակարգերը: Խնդրի համապարփակ, միջգերատեսչական զոհակենտրոն լուծման նպատակով առաջարկվում է.

• **իրավական նորմատիվ հենքի արդիականացում.** վերանայել ազգային ուղղորդման աջակցության կարգերը (մասնավորապես՝ Կառավարության թիվ 1385-Ա 492-Ն որոշումները)՝ հայտնաբերման ու ուղղորդման կենտրոնացված հստակ ընթացակարգեր սահմանելու համար՝ դրանց իրավական հիմքերն ամրագրելով ոլորտային օրենքում.

• **ինստիտուցիոնալ լիազորությունների պատասխանատվության հստակեցում.** օրենսդրորեն սահմանել հայտնաբերման ուղղորդման հստակ գործառույթներ ու միասնական ցուցիչներ առաջնային շփման բոլոր օղակների համար՝ զուգորդելով դրանք ներքին ուղղորդման ընթացակարգերով, դեպքի ամփոփագրի միասնական ձևանմուշների ընդունմամբ, պարտադիր վերապատրաստումներով հաշվետվողականությամբ.

• **համակարգման որոշումների կայացման կառուցակարգերի հզորացում.** Աշխատանքի սոցիալական հարցերի նախարարությանը վերապահել հայտնաբերման գործընթացի գլխավոր համակարգողի դեր, իսկ Նույնացման հանձնաժողովի գործընթացային բաղադրիչն ուժեղացնել՝ պարտադիր դարձնելով գրավոր, հիմնավորված ժամանակին կայացվող

որոշումների անհապաղ հասանելիությունը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Մարդկանց թրաֆիքինգի միգրացիայի փոխկապակցվածությունը. զոհերի նույնացում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», № 2, 2023թ., էջ 122–130,

2. «Մշտադիտարկման ազգային մեխանիզմեր. մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հզորացում», «Պետություն իրավունք», N 3 (97), 2023թ., էջ 176–189,

3. «Մարդկանց թրաֆիքինգի շահագործման դեմ պայքարը զոհերի իրավունքների պաշտպանությունը քրեակատարողական համակարգում», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Vol. 16, No. 1(42), 2025թ., էջ 56–73,

4. «Մարդկանց թրաֆիքինգի շահագործման ենթարկված անձանց հայտնաբերումը ուղղորդումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք», «Դատական իշխանություն», 7–9 (313–315), 2025թ., էջ 151–162,

5. «Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խոցելի դիրքի չարաշահումը թրաֆիքինգը կանխելու իրավական կառուցակարգերը», «ՀՀ սահմանադրական դատարան. տեղեկագիր», 4(121), 2025թ., էջ 114–133,

6. «Մարդու արժանապատվությունը պետության սոցիալական բաղադրիչը՝ որպես մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման սահմանադրական հիմք», «Դատական իշխանություն», 1–3 (319–321), 2026թ., էջ 59–72,

7. «Կանանց երեխաների խոցելիությունը մարդկանց թրաֆիքինգի համատեքստում», «Տարածաշրջան աշխարհ», № 2 (63), 2026թ., էջ 77–87,

8. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը սահմանադրաիրավական մարդու իրավունքների դիտանկյունից. նյութական հիմքեր ընթացակարգային պարտավորություններ», «ՀՀ սահմանադրական դատարան. տեղեկագիր», 1(122), 2026թ., էջ 109–124:

СЕРГЕЙ ЛЕВАЕВИЧ КАЗИНЯН

БОРЬБА С ТОРГОВЛЕЙ ЛЮДЬМИ И ЗАЩИТА ПРАВ ЖЕРТВ

Торговля людьми в последние десятилетия стала одним из наиболее тяжких и многослойных нарушений прав человека во всем мире. Это явление далеко выходит за рамки изолированного уголовного преступления, представляя собой прямую угрозу конституционному строю, человеческому достоинству и «социальному иммунитету» общества. Под социальным иммунитетом в данном контексте понимается коллективная способность общества воспроизводить стабильные нормы поведения и нейтрализовать угрозы без разрушительных последствий. Несмотря на активное развитие международного права и формирование правозащитных механизмов, торговля людьми продолжает приобретать новые, скрытые формы, подпитываемые миграционными потоками, социально-экономическим неравенством, вооруженными конфликтами и стремительным развитием цифровых технологий. Хотя в Республике Армения были заложены основы правового регулирования, в частности принятие в 2014 году Закона «Об идентификации и поддержке лиц, подвергшихся торговле людьми и эксплуатации», преобладающим в отечественной науке и практике все еще остается ограниченный уголовно-правовой подход. Применяемая государством модель в основном носит ретроактивный, карательный характер, тогда как современные вызовы требуют комплексных превентивных, конституционных и институциональных механизмов.

Научная новизна диссертационного исследования заключается в том, что в отечественной юридической науке впервые осуществлен всеобъемлющий анализ борьбы с торговлей людьми в качестве многослойной конституционно-правовой проблемы, тесно связанной с социальной функцией государства. В работе обосновывается необходимость системного переосмысления позитивных обязательств государства через триединую структуру: гарантировать, обеспечивать и защищать права человека. Этот концептуальный сдвиг требует перехода от модели реагирования постфактум, где государство действует по формуле «государство против преступника», к модели проактивной превентивной конституционной защиты. Опираясь на прецедентное право Европейского суда по правам человека, в частности на основополагающее дело «Ранцев против Кипра и России», автор подчеркивает, что позитивные обязательства государства возникают не только при наличии конкретных жалоб, но и тогда, когда власти «знали или должны были знать» о системных рисках эксплуатации. Для обеспечения независимого контроля за выполнением этих обязательств в диссертации выдвигается и обосновывается концепция внедрения механизма превентивного конституционного мониторинга посредством наделения Защитника прав человека Республики Армения мандатом Национального докладчика по вопросам торговли людьми.

Особое внимание в исследовании уделяется многослойной и пересекающейся природе уязвимости к торговле людьми. Автор доказывает, что эксплуатация редко возникает из-за одного изолированного фактора; чаще всего она является результатом комбинированного воздействия гендерного неравенства, бедности, институциональной изоляции и маргинализации. Впервые в рамках конституционного права рассматривается концепция «цифровой конституционной защиты», актуализированная переходом вербовки в онлайн-пространство и использованием алгоритмических манипуляций, что требует установления публичной ответственности для технологических платформ. Детально исследуется уязвимость женщин и детей, которые становятся главными мишенями сексуальной и трудовой эксплуатации. Наряду с этим вскрываются структурные проблемы институциональной эксплуатации в закрытых и полузакрытых учреждениях. Доказывается, что существующие правовые режимы лишения дееспособности и недобровольной госпитализации лиц с проблемами психического здоровья, а также иерархические криминальные субкультуры и небрежность администрации в пенитенциарной системе Армении формируют идеальную среду для скрытого принудительного труда и злоупотребления уязвимым положением. Отдельно анализируются миграционные процессы, где подчеркивается критическая важность разграничения торговли людьми и незаконного ввоза мигрантов для безусловного соблюдения принципа невысылки и предоставления международной защиты беженцам.

В практической плоскости диссертация выявляет серьезные пробелы в функционировании Национальной системы перенаправления в Республике Армения. Эмпирические данные и анализ институциональной практики показывают, что бремя выявления жертв непропорционально возложено на правоохранительные органы, в то время как потенциал инспекций труда, социальных и медицинских работников, а также образовательных учреждений практически не используется из-за отсутствия обязательных стандартизированных индикаторов и процедур. Автор жестко критикует практику, при которой предоставление поддержки и официальное признание статуса жертвы де-факто ставятся в зависимость от наличия уголовного производства или готовности жертвы сотрудничать с полицией. В качестве решения предлагается полная модернизация правовой базы, включая пересмотр соответствующих постановлений Правительства, для внедрения виктимоцентричного подхода. Защита жертвы должна рассматриваться как непосредственный компонент восстановления конституционного порядка и человеческого достоинства в рамках концепции восстановительного правосудия, гарантируя безусловный доступ к юридической помощи, социальной реабилитации и справедливой компенсации с момента первоначального выявления рисков.

SERGEY LYOVA GHAZINYAN

ACTION AGAINST TRAFFICKING IN HUMAN BEINGS AND RIGHTS PROTECTION OF VICTIMS

In recent decades, human trafficking has emerged as one of the most severe and multifaceted human rights violations globally. This phenomenon extends far beyond an isolated criminal offense, representing a direct threat to the constitutional order, human dignity, and the overall "social immunity" of society. In this context, social immunity is understood as the collective capacity of a society to reproduce stable behavioral norms and neutralize threats without devastating consequences. Despite the robust development of international law and the establishment of various human rights mechanisms, human trafficking continues to evolve into new, clandestine forms, fueled by migration flows, socio-economic inequalities, armed conflicts, and the rapid advancement of digital technologies. Although the Republic of Armenia has laid the foundational legal framework, notably with the adoption of the 2014 Law on the Identification and Support of Persons Subjected to Human Trafficking and Exploitation, a narrow criminal-law perspective still dominates domestic legal science and state practice. The prevailing model is primarily retroactive and punitive, whereas modern challenges necessitate comprehensive preventive, constitutional, and institutional mechanisms.

The scientific novelty of this dissertation lies in its pioneering, comprehensive analysis within domestic public law of combatting human trafficking as a multi-layered constitutional issue deeply intertwined with the social function of the state. The research substantiates the necessity for a systemic reconceptualization of the state's positive obligations through a tripartite structure: to guarantee, to ensure, and to protect human rights. This conceptual shift demands a transition from a reactive model, where the state acts merely to punish the offender after the fact, to a model of proactive preventive constitutional protection. Drawing heavily on the jurisprudence of the European Court of Human Rights, particularly the landmark case of Rantsev v. Cyprus and Russia, the author emphasizes that the state's positive obligations are triggered not only by specific complaints but also whenever the authorities "knew or ought to have known" about systemic risks of exploitation. To ensure independent oversight of these obligations, the dissertation proposes and justifies the introduction of a preventive constitutional monitoring mechanism by formally expanding the mandate of the Human Rights Defender of the Republic of Armenia to act as the National Rapporteur on human trafficking.

Special attention is devoted to the multi-layered and intersectional nature of vulnerability to human trafficking. The author argues that exploitation rarely stems from a single isolated factor; rather, it is the result of the combined impact of gender inequality, poverty, institutional isolation, and marginalization. For the first time in domestic constitutional law, the concept of "digital constitutional protection" is explored, driven by the shift of recruitment into the online sphere and the use of algorithmic manipulation, thereby demanding public accountability for tech platforms. The study thoroughly examines the vulnerability of women and children, who remain the primary targets for sexual and labor exploitation. Furthermore, the research exposes structural issues of institutional exploitation within closed and semi-closed environments. It demonstrates that current legal regimes regarding the deprivation of legal capacity and involuntary hospitalization for persons with mental health issues, alongside hierarchical criminal subcultures and administrative negligence in the penitentiary system, create an ideal environment for hidden forced labor and the abuse of a position of vulnerability. Migration processes are also analyzed separately, highlighting the critical necessity of distinguishing between human trafficking and migrant smuggling to strictly uphold the principle of non-refoulement and ensure international protection for refugees.

On a practical level, the dissertation identifies severe gaps in the functioning of the National Referral Mechanism in Armenia. Empirical data and an analysis of institutional practices reveal that the burden of victim identification falls disproportionately on law enforcement agencies. Meanwhile, the potential of labor inspectors, social workers, healthcare professionals, and educational institutions remains vastly underutilized due to the absence of mandatory standardized indicators and cross-agency operating procedures. The author strongly criticizes the practical reality where the provision of support and the official recognition of victim status are de facto contingent upon the existence of criminal proceedings or the victim's willingness to cooperate with the police. As a solution, the dissertation proposes a complete modernization of the legal framework, including the revision of relevant government decrees, to embed a genuinely victim-centered approach. The protection of the victim must be viewed as an immediate component of restoring constitutional order and human dignity within the framework of restorative justice, guaranteeing unconditional access to legal aid, social rehabilitation, and fair compensation from the very moment risks are initially identified.